Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported** (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

796.5(062)
Հ - 11

Հաստատված Հ Ս Խ Հ Պրո-
լետ. Տուրիզմի և էքսկուր-
սիաների կամավոր Ընկե-
րության Առաջին Համա-
գումարում—1930 թ. դեկտ.
30-31.

# ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

## ՀՍԽՀ ՊՐՈԼԵՏԱՐԱԿԱՆ ՏՈՒՐԻԶՄԻ ՅԵՎ ԵՔՍԿՈՒՐՍԻԱՆԵՐԻ ԿԱՄԱՎՈՐ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ

ՊԵՏՀՐԱՏ 1931 ՅԵՐԵՎԱՆ

10240

09 SEP 2013

առեպ. № 6295 Պատ. № 1258 Տիրաժ 2000

Պետհրատի տպարան, Երևան

25 OCT 2010

# I. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

*§ 1. Կազմակերպված տուրիզմի և եքսկուրսիաների բազմակողմանի զարգացման համար—աշխատավորական մասսաների քաղաքական, արտադրական և կուլտուրական լուսավորությունն օժանդակելու, սոցիալիստական շինարարությանը, նրանց ակտիվ աշխատանքի ներգրավելու, սոց. շինարարության նվաճումներին լայնորեն ծանոթանալու, ինչպես նաև յերկրի եկոնոմիկան, աշխարհագրությունն ու ազգագրությունը հետազոտելու, միաժամանակ աշխատավորության համար ավելի կուլտուրական հանգիստ կազմակերպելու նպատակով կազմակերպվում է ՀՍԽՀ Պրոլետարական Տուրիզմի և Եքսկուրսիաների ընկերություն «ՊՏԵ-ը»։*

*§ 2. Կանոնադրության § 1-ում նշված նպատակներին հասնելու համար ընկերությանը վերապահվում է.*

*ա) Աշխատավորների մեջ տարածել կազմակերպված տուրիզմի գաղափարները, այսինքն ինքնագործ ճանապարհորդություններ, եքսկուրսիաներ, վորոնք կնպաստեն քաղաքական և կուլտուրական մակար-*

դակի բարձրացմանը, կապահովեն աշխատանքային հանգստի ավելի ռացիոնալ օգտագործումը և կնպաստեն աշխատավորների ֆիզիկական առողջացմանը:

բ) Քաղաքականորեն և կազմակերպված ղեկավարել տուրիստական շարժումը, պայքարելով տուրիզմի [illegible] մեջ դասակարգայնորեն խորթ ազդեցությունների, մասնավորապես ապաքաղաքականության տենդենցների, թափառաշրջիկության դեմ:

գ) Կազմակերպել էքսկուրսանտների և տուրիստների հասարակական աշխատանքը էքսկուրսիաների ժամանակ քաղաքական կամպանիաներին ակտիվորեն մասնակից դարձնելու համար կազմակերպելով նրանց մասնագիտական ագիտացիոն պրոպագանդիստական աշխատանքը, սերտորեն կապելով այն սոցիալիստական շինարարության ընթացիկ խնդիրներին:

դ) Աջակցել ԽՍՀՄ-ի պաշտպանությանը, տուրիզմի ռազմականացման, ռազմա-քաղաքական մի շարք գիտելիքներ ուսուցանելու միջոցով, առանձնապես մտցնելով հատուկ նորույթներ (շրջահայեցողություն անծանոթ վայրերում, ազդանշանային ձևեր և այլն), ինչպես նաև մասնագիտական կադրեր պատրաստելու գործում (հետախույզներ, դահուկով ճամբորդողներ, ալպինիստներ և այլն):

ե) Մշակել մարշրուտներ և էքսկուրսիոն օբյեկտներ հանրապետության մեջ, Անդրկովկասում և ԽՍՀՄ-ում:



զ) Մշակել տուրիզմի գիտա-հետազոտական պրոբլեմներ և տանել կոնսուլտացիոն աշխատանք տուրիզմի հարցերի շուրջը:

է) Վարել համապատասխան փոխադրական օպերացիաներ, ինչպես պետական փոխադրական միջոցների, նույնպես և կազմակերպելով սահմանված օրենքներով սեփական միջոցներ:

ը) Հանրապետության մեջ, Անդրկովկասում և ԽՍՀՄ-ում կազմակերպել էքսկուրսիաներ, ճամբորդություններ և արշավներ (սրանց թվում նաև ինքնագործ) էքսկուրսիոն—տուրիստական աշխատանքի բոլոր տեսակներով ու ձևերով (դահուկային, նավային, հեծանիվային, հետիոտն, լեռնային) մասսայական ու խմբակային էքսկուրսիաներ, գրոհներ և այլն:

թ) Կազմակերպել արտադրական խմբակային և մասսայական էքսկուրսիաներ դեպի արդյունաբերական և գյուղատնտեսական շրջաններ՝ նպատակ ունենալով բարձրացնել արտադրական վորակը և սոցիալիստական շինարարության փորձի փոխանակումը:

ժ) Կազմակերպել և պահել հյուրանոցներ, բազաներ և լագերներ, տնակներ էքսկուրսանտներին և տուրիստներին օգնելու համար (գիշերելու տեղ, սնունդ, կուլտ. սպասարկում և այլն):

ժա) Սպասարկել և կազմակերպել գիտական էքսպեդիցիաներ տուրիզմի և էքսկուրսիոն հարցերի շուրջը, հրատարակել պարբերական և վոչ պարբերական

գրականություն (ժուռնալներ, ժողովածուներ, գրքեր-պլակատներ, թերթիկներ, մարշրուտներ, կոնսպեկտներ, քարտեզներ, լուսանկարներ և այլն):

ժբ) Կազմակերպել տուրիզմի հարցերի հետ կապված մշտական և շարժական ցուցահանդեսներ, դասընթացներ, թանգարաններ, անցկացնել համագումարներ. կոնֆերենցիաներ, հրավիրել ժողովներ, կազմակերպել դիսպուտներ, դասախոսություններ, զեկուցումներ, սեմինարներ և այլն՝ կապված ընկերության գործունեության հետ:

ժգ) Կազմակերպել գրադարաններ, ակումբներ, և տուրիստի ու եքսկուրսանտի տներ:

ժդ) Պատրաստել, գնել և մատակարարել եքսկուրսանտներին ու տուրիստներին հատուկ սարքավորում, գույք և ճանապարհորդական պիտույքներ (նավակներ, վրաններ, պլաշչներ և այլն), կազմակերպել նավակային, դահուկային, հեծանվային կայաններ ու վարձակալական կետեր, կազմակերպել տուրիստին և եքսկուրսանտին անհրաժեշտ եքսկուրսիոն սարքավորման և գույքի վարձակալություն:

ժե) Կազմակերպել արհեստանոցներ տուրիստական գույք արտադրելու և վերանորոգելու համար:

ժզ) Կապ պահպանել այլ յերկրների տուրիստական պրոլետարական կազմակերպությունների հետ:

ժէ) Ոժանդակել բոլոր կազմակերպություններին ու հիմնարկներին տուրիզմի և եքսկուրսիաների հարցերի մշակման գործում, ինչպես և միաժամանակ



մասնակցել այդ հիմնարկների ու կազմակերպությունների համապատասխան աշխատանքներին: Եքսկուրսիոն—տուրիստական գործի զարգացման հետ կապված հարցեր հարուցել և պաշտպանել համապատասխան մարմինների ու կազմակերպությունների առաջ:

ժը) Բաց անել բաժիններ, բաժանմունքներ, գրասենյակներ ու ներկայացուցչություններ հանրապետության ամբողջ տերիտորիայի վրա: Պատրաստել յեվ ոգտագործել կինո-ժապավեններ յեվ դիապոզիտիվներ:

§ 3. Ընկերությունն իր հաշվառման յենթարկվելու որից ճանաչվում է որպես իրավական դեմք և կանոնադրությամբ նախատեսված նպատակների սահմաններում իրավունք ունի կատարելու անհրաժեշտ իրավական բոլոր գործողությունները:

§ 4. Ընկերությունն ունի իր անունը կրող կնիք:

§ 5. Ընկերության խորհրդի մշտական տեղը համարվում է Յերևանը:

## II. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԸ, ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՅԵՎ ՆՐԱ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

§ 6. Ընկերությունը կազմակերպվում է հանրապետական ընկերության մեջ մտնող աշխատավորների կամավոր անդամակցությամբ և հանրապետական ընկերության ու շրջանային բաժանմունքների

մեջ մտած — պետական կենտրոնական ու տեղական հիմնարկների ու ձեռնարկների, կոոպերատիվ, պրոֆեսիոնալ ու հասարակական այլ կազմակերպությունների մասնակցությամբ:

§ 7. Ընկերության անդամ կարող են լինել՝

ա) 14 տարեկանից վոչ պակաս հասակ ունեցող քաղաքացիները, բացառությամբ խորհուրդների ընտրական իրավունքներից զրկվածների:

բ) Պետական հիմնարկներն ու ձեռնարկները, պրոֆեսիոնալ, կոոպերատիվ և հասարակական այլ կազմակերպություններն ու կոլեկտիվները:

§ 8. Ընկերության անդամի ընդունելությունը կատարվում է ընկերության բջիջի միջոցով: Այս օրենքից շեղումը սահմանվում է Անդրկովկասյան խորհրդի մշակած հրահանգի համաձայն:

§ 9. Շրջանային բոլոր ընկերությունները պարտավոր են՝

ա) Համաձայնեցնել իրենց կանոնադրությունները սույն կանոնադրության և ՊՏՆԸ-ի խորհրդի նախագահության հետ:

բ) Կազմել իրենց գործնեյության պլանները և կատարել նրանց մեջ համապատասխան փոփոխություններ՝ համաձայն Ընկերության Հանրապետական Խորհրդի գործնեյության ընդհանուր պլանի և ավարտել նրանց կիրառումը:

գ) Կատարել Հանրապետական Խորհրդի և նրա նախագահության բոլոր դիրեկտիվներն ու ցուցմունքները:



դ) Ամեն ամիս փոխադրել Հանրապետական Խորհուրդ անդամավճարների և այլ յեկամուտների վորոշ տոկոսը:

Ծանոթություն.— 1) Տոկոսների չափը սահմանվում է ՀԱՄ. Կենտ. Խորհրդի կողմից.

2. Տեղական հատուկ կամպանիաներով անցկացնելու ժամանակ ստացված նպատակային միջոցներն ամբողջովին թողվում են տեղական ընկերությունների տրամադրության տակ: Հանրապետական կամպանիաներ անցկացնելու ժամանակ հավաքված գումարներն ամբողջովին գնում են Հանրապետական Խորհուրդ: Փոփոխություններ և շեղումներ յուրաքանչյուր անգամ կատարվում են Հանրապետական Խորհրդի հատուկ վորոշմամբ:

յե) Հաստատելու համար, Հանրապետական Խորհուրդ ուղարկել դրամական հաշվեկշիռները, հաշվետվություններն ու նախահաշիվները, ինֆորմացիոն և վիճակագրական տեղեկությունները ըստ Հանրապետական Խորհրդի սահմանած ձևերի ու ժամկետների:

զ) Ունենալ կնիք, դրոշակներ, անդամագրքույկներ՝ դրոշմանիշեր՝ առանձնահատուկ կրծքանշաններ և Հանրապետական Խորհրդի կողմից հաստատված միասնական այլ ձևեր:

§ 10. Ընկերության յուրաքանչյուր անդամ, մուծում է մուտքի և տարեկան անդամավճար: Մու-

ծումների չափը և մուծման ժամկետները սահմանվում են Ընկերության Խորհրդի և հաստատվում Ընկերության համամիութենական համագումարի կողմից՝ աշխատավորների առանձին կատեգորիաներ կարող են ազատվել մուծումներից։

Ընկերությունից դուրս գալու դեպքում անդամավճարները չեն վերադարձվում։

§ 11. Ընկերության յուրաքանչյուր անդամ պարտավոր է՝

ա) Ենթարկվել ընկերության կանոնադրությանը, ակտիվորեն մասնակցել նրա աշխատանքներին, նպաստել Ընկերության գաղափարների ու ձեռնարկումների տարածմանը աշխատավորական լայն մասսաների մեջ և գրավել նոր անդամներ։

բ) Ընկերության յուրաքանչյուր անդամ պարտավոր է նպաստել ԽՍՀՄ սոցիալիստական շինարարության փորձի փոխանակման և ակտիվ մասնակցության միջոցով հասարակա — քաղաքական կյանքում՝ ինչպես իր բջիջի, նույնպես և տեղերում Ընկերության կողմից կազմակերպված էքսկուրսիաների և ինքնագործ համերգությունների ժամանակ։

§ 12. Ընկերության յուրաքանչյուր անդամ իրավունք ունի՝

ա) Վճռական ձայն Ընկերության ժողովներում և խորհրդակցություններում, ինչպես նաև ընտրելու և ընտրվելու Ընկերության կառավարչական մարմիններում։



բ) Ընկերությունից ստանալ օժանդակություն ինքնագործ էքսկուրսիաներ և համերգություններ կազմակերպելու գործում ու առաջին հերթին օգտվելու Ընկերության կազմակերպած բոլոր էքսկուրսիաներից։

գ) Արտոնյալ հաճախում Ընկերության և նրա տեղական մարմինների կողմից կազմակերպված ժողովներին, ցուցահանդեսներին, դիսպուտներին և այլն։

դ) Կոլեկտիվորեն արտոնյալ ձևով օգտվելու Ընկերության տրամադրության տակ յեղած սարքավորումից։

ե) Ձրի կոնսուլտացիա Ընկերության մարմիններում։

զ) Կրելու Ընկերության կրծքանշանը։

§ 13. Ընկերությունից հանվում են հետևյալ դեպքերում՝

ա) Դուրս գալու ցանկությամբ դիմում տալու դեպքում։

բ) Ընկերության Համամիության Համագումարի ժամկետում անդամավճար չմուծելու դեպքում։

գ) Ընտրողական ձայնի իրավունքը կորցնելու դեպքում։

դ) Ընկերության անդամի կողմից վարկաբեկիչ վորևէ քայլ անելու դեպքում։

ե) Սույն կանոնադրությունն եյապես խախտելու դեպքում։

**Ծանոթություն.**—Անդամավճարները չմուծելու հետևանքով հեռացվածները կարող են նորից վերընդունվել՝ մուծումները կատարելու դեպքում:

§ 14. Ընկերության անդամի վտարումը կատարում է բջիջը Ընկերության վերադաս մարմնի (վորին յենթակա յե բջիջը) հաստատմամբ: Յեթե վըտարման նախաձեռնությունը բղխում է Ընկերության բարձրագույն մարմիններից՝ բջջին իրավունք է վերապահվում բողոքելու այդ վորոշման դեմ:

§ 15. Ընկերության վտարված անդամին իրավունք է վերապահվում հեռացման առթիվ բողոքելու Ընկերության վերադաս մարմիններին:

§ 16. Ընկերության կազմի մեջ մտած պետական հիմնարկներն ու ձեռնարկները, կոոպերատիվ, պրոֆեսիոնալ և հասարակական այլ կազմակերպությունները մասնակցում են Ընկերության մարմիններում իրենց ներկայացուցիչներն ուղարկելով Համամիութենական, Անդրկովկասյան, Հանրապետական ու տեղական համագումարներին՝ համաձայն իրենց գործունեության մասշտաբով:

## III. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ ՅԵՎ ՆՐԱՆՑ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ

17. Ինչպես Հանրապետական Ընկերության, նույնպես և շրջանային ընկերությունների միջոցները կազմվում են.—



ա) Մուտքի և տարեկան անդամավճարները:

բ) Ընկերության ձեռնարկումներից, կազմակերպած եքսկուրսիաներից և ճանապարհորդություններից գոյացած յեկամուտները:

գ) Ընկերությանը հատկացված պետական և տեղական բյուջեները:

դ) Վերադարձ և անվերադարձ մուծումները, պետական հիմնարկների, ձեռնարկների, կոոպերատիվ-պրոֆեսիոնալ և հասարակական կազմակերպությունների կողմից:

յե) Յեվ այլ միջոցներ:

§ 18. Ընկերության հիմնական դրամագլուխն՝ ըստ նրա առանձին ոդակների, կազմում է մուտքի անդամավճարների 50%-ից, ինչպես և պետհիմնարկների ու ձեռնարկների, կոոպերատիվ, պրոֆեսիոնալ և հասարակական այլ կազմակերպությունների անվերադարձ հատկացումներից: Մուծումների 25%-ը հատկացվում է ընկերության Հանրապետական Խորհրդի հիմնական կապիտալը կազմելու և 25%-ը Անդրկովկասյան ընկերության հիմնական կապիտալը: Անվերադարձ հատկացումների 50%-նա ամբողջովին գնում է այն կազմակերպությունների հիմնական կապիտալը, վորտեղ նրանք մուծվել են:

§ 19. Ընկերությունն ոգտագործում է իր միջոցները Ընկերության Հանրապետական խորհրդի կողմից հաստատված ծրագրի և սմետայի համաձայն: Այս ծրագիրն իրականացնելու համար, Ընկերության

Հանրապետական Խորհրդի նախագահության կողմից հաստատված ծրագրի համաձայն, Հանրապետական և տեղական մարմինների կողմից կազմակերպվում են բազաներ, ճամբարներ, հյուրանոցներ և զանազան ձեռնարկներ։

Հանրապետական Խորհրդի կողմից մասնանշված վայրերում կառուցված բազաների, ճամբարների, հյուրանոցների և այլնի կազմակերպումն ու վարելը, կարող է անցնել նաև Հանրապետական Խորհրդի անմիջական ղեկավարությանը։

§ 20. Մասնանշված ձեռնարկությունների կազմակերպման համար, Ընկերության յուրաքանչյուր բջիջն օգտագործում է իր տրամադրության տակ գտնվող միջոցները։

§ 21. Ընկերությունը պարտավոր է ներկայացնել հասարակական հաշվետվություն այն կանոններով, վորոնք հաստատվում են Հանրապետական Ֆինժողկոմատի կողմից, Ընկերության Հանրապետական Խորհրդի համաձայնությամբ.

## IV ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

§ 22. Ընկերության հիմնական բազան հանդիսանում է նրա առաջնակարգ բջիջը։ Ընկերության բջիջներ պետք է կազմակերպվեն հիմնարկներին, ձեռնարկներին և այլ կազմակերպություններին կից, յերբ տվյալ վայրերում Ընկերության յերեք անդամներ արդեն կան։



§ 23. Ընթացիկ աշխատանքները ղեկավարելու համար, բջիջն ընտրում է իր կողմից բյուրո, իսկ յերբ բջջի անդամները հասնում են 10 հոգու, ընտրում են նաև քարտուղար։

§ 24. Ընկերությունը շրջանային բաժանմունքների միջոցով միանում է բջիջների գործունեությունը, իսկ շրջանային բաժանմունքները միանում են Հանրապետական Խորհրդին։

§ 25. Հանրապետական Ընկերությունն ու շրջանային Խորհուրդները, հանդիսանում են ինքնավար մարմիններ, վորոնց գոյությունը պահպանվում է իրենց յենթակա կազմակերպությունների միջոցներով, անհատական անդամավճարներով, պետական բյուջեյից հատկացված նպաստներով և մուծումներով։

§ 26. Հանրապետական Խորհուրդը՝ ինչպես և շրջանային Խորհուրդների, տեղական տուրիզմի և էքսկուրսիաների ամբողջ աշխատանքը տանում են իրենց ծրագրի համաձայն, իսկ Հանրապետական նշանակություն ունեցող մարշրուտների ամբողջ աշխատանքը կատարվում է համաձայն Հանրապետական Խորհուրդների ծրագրի։

§ 27. Ընկերության մարմիններն են՝ համագումարները, խորհուրդներն ու նրանց նախագահությունները և վերահսկիչ հանձնաժողովները, վորոնք կազմվում են և աշխատանք տանում համաձայն սույն կանոնադրության և այն օրենքների, հրահանգների

ու նորմաներին, վորոնք հաստատված են հանրապետական խորհուրդների կողմից:

§ 28. Ընկերության ամենաբարձր մարմինն է ընկերության հանրապետական համագումարը, վորը կազմված է շրջանային համագումարներից ընտրված ներկայացուցիչներ: Հանրապետական համագումարների միջև ժամանակամիջոցում ընկերության ամենաբարձր մարմինը հանդիսանում է հանրապետական խորհուրդը, վորն ընտրվում է հանրապետական համագումարի կողմից: Ընկերության հանրապետական խորհուրդն ընտրում է իր կողմից խորհուրդ և նախագահություն, վորոնց վրա ընկնում է ընկերության ամբողջ գործունեությունը, մինչև խորհուրդների պլենումը, իսկ հանրապետական խորհրդի նախագահության աշխատանքներն ստուգելու համար հանրապետական համագումարն ընտրում է վերստուգիչ հանձնաժողով:

§ 29. Ընկերության հանրապետական համագումարը գումարվում է տարվա մեջ առնվազն մեկ անգամ, նույնպես և շրջանային համագումարներն ատարին մեկ անգամ:

Հանրապետական արտակարգ համագումարները կարող են գումարվել կենտրոնական խորհրդի առնվազն 1/3 մասի, ընկերության տեղական առնվազն հինգ կազմակերպություններից, և կամ վերստուգիչ հանձնաժողովի պահանջով, ըստ վորում արտակարգ համագումարը նշված դեպքերում պետք է հրավիրվի



հանրապետական խորհրդի կողմից վոչ ուշ, քան պահանջ ներկայացրած որից մեկ ամսյա ժամանակամիջոցից:

Հանրապետական խորհրդի ինչպես նաև տեղական բաժանմունքների պլենումները գումարվում են 3 ամիսը 1 անգամից վոչ պակաս:

Խորհուրդների արտակարգ նիստեր կարող են լինել նրանց նախագահությունների վորոշմամբ և վերստուգիչ հանձնաժողովի պահանջով:

§ 30. Հանրապետական համագումարի խնդիրներն են՝

ա) Ընկերության կանոնադրության փոփոխումն ու լրացումը:

բ) Ընկերության խորհուրդների ու վերստուգիչ հանձնաժողովների զեկուցումների ու հաշվետվությունների քննություն և հաստատումն:

գ) Ընկերության խորհրդի, վերստուգիչ հանձնաժողովի, լուծարքային հանձնաժողովի և նրանց թեկնածուների ընտրությունը:

դ) Լուծումն այն բոլոր հարցերի, վորոնք կվերաբերեն ընկերության գործերին, նույնպես և այն հարցերի, վորոնք կառաջադրվեն հանրապետական համագումարի կողմից խորհրդի, նախագահության և վերստուգիչ հանձնաժողովի վորոշմամբ:

**Ծանոթություն.**—Համագումարում բոլոր հարցերը վճռվում են ձայների մեծամասնությամբ:

## ԽՈՐՀՈՒՐԴ

§ 31. Ընկերության խորհուրդն ընտրվում է ընկերության հանրապետական համագումարի կողմից համագումարի ընթացքում լսված անդամներից։

**Ծանոթություն.**— Մինչև ընկերության I հանրապետական համագումարը նշանակվում է ժամանակավոր խորհուրդ և ժամանակավոր խորհրդի նախագահություն, համաձայն ՀՍՍՀ կառավարության վորոշման։

§ 32. Ընկերության խորհրդի անելիքներն են՝

ա) Ընկերության խորհրդի նախագահության ընտրություն։

բ) Ընկերության տարեկան անելիքների նախագծերի հաստատում։

գ) Ընկերության տարեկան սմետայի հաստատում։

դ) Ընկերության միջոցների բաշխումն նրա բջիջներին։

ե) Ընկերության անդամավճարների ու այլ յեկամուտների բաշխումն իր բջիջներին։

զ) Ունկնդրումն ընկերության նախագահության և վերստուգիչ հանձնաժողովի զեկուցումներին։

է) Մինչ համագումարներն յեղած ժամանակաընթացքում ընդհանուր ղեկավարություն ընկերության գործնեյությանը։

ը) Հրավիրումն ընկերության համագումարների,



նրանց ներկայացուցչության նորմայի հաստատումն համագումարին զեկուցումների, հաշվետվությունների ու նախագծերի նախապատրաստություն։

թ) Հաստատումն բոլոր հրահանգների, վորոնք վերաբերում են ընկերության գործնեյությանը։

ժ) Հաստատումն ընկերության գործնեյությանը վերաբերող այլ հարցերի, վորոնց քննությունը հանրապետական համագումարը կհանձնի խորհրդին։

§ 33. Ընկերության խորհրդի անդամներն իրավունք ունեն մասնակցելու ընկերության տեղական կազմակերպությունների բոլոր ժողովներին խորհրդակցական ձայնի իրավունքով։

## ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅՈՒՆԸ

§ 34. Ընկերության խորհրդի նախագահությունը ընտրվում է ընկերության Հանրապետական Խորհրդի կողմից մեկ տարի ժամանակով։ Խորհրդի նախահությունն իր միջից ընտրում է նախագահ և տեղակալ և իր անդամների մեջ բաժանում պարտականությունները։

**Ծանոթություն.** — Խորհրդի նախագահությունը կարող է իր կողմից ընտրել բանվորական բյուրո վոչ պակաս 7 հոգուց, ընթացիկ հարցերը լուծելու համար, վորոնց կատեգորիաները հաստատվում են նախագահության կողմից։

§ 35. Խորհրդի նախագահության նիստը կայա-

նում է՝ յերբ մասնակցում են նախագահության անդամների կեսից ավելին, դրանց թվում և նախագահը կամ տեղակալը: Խորհրդի նախագահությունը վարում է Ընկերության բոլոր գործերը և առանց հատուկ լիազորությունների հանդես գալիս նրա կողմից հիմնարկների, կազմակերպությունների ու անձանց հետ ունեցած բոլոր տեսակի գործառնությունների ժամանակ:

Խորհրդի նախագահությունն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է ընկերության համագումարի կողմից հաստատված հատուկ հրահանգով:

§ 36. Խորհրդի նախագահության անելիքներն են նաև ընկերության ամբողջ ցանցի համախմբումը ղեկավարումը և ընկերության ամբողջ ցանցի գործունեությանն ընթացք տալը:

ա) Խորհրդի միջպլենումների ժամանակաընթացքում ղեկավարել ընկերության ամբողջ գործունեությունը, մասամբ հսկել տեղական բաժանմունքների գործունեությանը, նրանց մարմինների վորոշումները փոխելու իրավունքով: ՀՍԽՀ-ի տերիտորիայում կազմակերպել հանրապետական նշանակություն ունեցող մրցույթներ, սարքավորել ու նպաստել այդ մրցույթներին բազաներով և այլն:

բ) Նախագահության անմիջական ղեկավարությամբ կազմակերպել ձեռնարկներ և այլ ապարատներ նրա աշխատանքներին նպաստելու համար:



գ) Նշանակումն և արձակումն ապարատների այն բոլոր աշխատակիցների, վորոնք սպասարկում են ընկերության խորհրդին, նրա նախագահությանը, ինչպես և այն ձեռնարկներին, վորոնք գտնվում են ընկերության կենտրոնական մարմինների ղեկավարության տակ:

դ) Ընկերության անունից բոլոր գործարքների կատարումն:

յե) Բոլոր տեսակի պետական կազմակերպություններում ընկերության կողմից ներկայացուցչություն:

զ) Ընկերության գործունեությանը վերաբերող այլ հարցերի քննությունը, վորոնք կհանձնվեն նախագահությանը հանրապետական համագումարի կամ Ընկերության Խորհրդի կողմից:

## ՎԵՐՍՏՈՒԳԻՉ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

§ 37. Խորհրդի նախագահության գործունեությունն ստուգելու ինչպես նաև հաշվետվությունն ու հսկողությունը վարելու համար Հանրապետ. համագումարի կողմ ց ընտրվում է վերստուգիչ հանձնաժողով 5 անդամից և. 2 թեկնածուից բաղկացած:

§ 38. Այն անձինք, վորոնք ընտրվում են վերահսկիչ հանձնաժողովում, իրավունք չունեն ընկերության մեջ կամ նրա ղեկավար կենտրոնական մարմիններում վարձու կամ ընտրովի աշխատանք տանելու:

§ 39. Ընկերության վերստուգիչ հանձնաժողովը ըստ իր հայեցողության, վորոշ ժամանակ հավաքվում և ստուգման ե յենթարկում ընկերության բոլոր մարմինները, ձեռնարկներն ու կազմակերպությունները ինչպես կենտրոնում, նույնպես և տեղերում, ինչպես ֆինանս—տնտեսական, նույնպես և աշխատանքի ընդհանուր դրվածքի տեսակետից։

§ 40. Վերստուգիչ հանձնաժողովը պարտավոր ե Ընկերության Համագումարի հրավիրման որից մեկ ամիս առաջ ավարտել հաշվետվության, բալանսի, դրամարկղի և ընկերության կապիտալի, ինչպես նաև սրանց վերաբերող գրքերի, հաշվետվությունների ու փաստաթղթերի ստուգումն,

§ 41. Վերստուգիչ հանձնաժողովի անդամներն իրավունք ունեն մասնակցելու Խորհրդի, խորհրդի նախագահության, նրա տեղական կազմակերպությունների բոլոր ժողովներին՝ խորհրդակցական ձայնով։

## ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

§ 42. Ընկերության ոպերացիոն տարին համարվում ե Հունվարի 1-ից մինչև Դեկտեմբերի 3-ը ներառյալ, բացառությամբ առաջին հաշվետվական շրջանի, վորը հաշվվում ե Ընկերության գործնեության հիմնադրման որից մինչև 31/XII։

§ 43. Խորհրդի նախագահության կողմից յուրաքանչյուր հաշվետու տարի կազմվում ե հաշվետվու-



թյուն Ընկերության գործնեության, նրա բալանսի և շրջանառության մասին։ Բացի այդ, Խորհրդի նախագահությունն ոպերացիոն նոր տարվա համար կազմում ե աշխատանքի նախահաշիվ և ծրագիր։

§ 44. Հաշվետվությունը կազմվում ե համաձայն հրապարակական հաշվետվության որենքի, ըստ Ընկերության Խորհրդի հաստատած հաշվետվությունների ու բալանսների։ Սրանցից դուրս յեղածներն հրապարակվում են ի գիտություն ընդհանուրի։

§ 45. Ընկերության շրջանառություններից ստացված վնասները ծածկվում են ընկերության պահեստի գումարից։

## ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԼՈՒԾԱՐՔԸ

§ 46. Պրոլետ—տուրիզմի և Եքսկուրսիաների Ընկերությունն ընդհատում ե իր գոյությունը—

ա) ՀՍԽՀ կառավարության վորոշմամբ։

բ) Ընկերության հանրապետական համագումարի վորոշմամբ։

§ 47. Ընկերության գործերի լուծարքը կատարում ե լուծարքային հանձնաժողովը, վորը նշանակվում ե կամ կառավարական մարմինների և կամ ընկերության համագումարի կողմից։

§ 48. Ընկերության լուծարքի դեպքում նրա գույքը՝ իրեն պատկանող բոլոր պարտքերի վճարումից հետո անցնում ե ՀՍԽՀ կառավարությանը։

10240

ՀՀ Ազգային գրադարան

NL0309987